

26.029

Հ Ա Յ Կ Ո Ո Պ

Հ Ր Ա Հ Ա Ն Պ

ՍՊԱՆԿՈՂԵՐԱՑԻԱՅՈՒՄ ՓԱՅԱՄԱՐԿԱՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԾԱԽՍՄԱՆ ՈՒ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

(ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ՀԱՅԿՈՈՊ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ)

334.5

Հ-26



ԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՈՊ

1935

06.06.2013

26.029

334.5
2-95 *uc*

05 JAN 2010

ՀԱՅԿՈՈՊ
Հազվադեպ սեկտոր

Հայկոպի սիսեմի բյուր
կազմակերպություններին

Ներկա հրահանգն առաջարկում ենք կիրառման
դնել սույն 1935 թ. հունվարի 1-ից սկսած:

Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում
տալ հետևյալ ցուցմունքները:

Վորպեսզի կարելի լինի յուրաքանչյուր կողմե-
րատրվում կանոնավոր հիմքերի վրա դնել մարկաների
տնտեսության ղեկավարությունն ու վերահսկողու-
թյունը, Ցենտրոսայուզն անկախ գոյություն ունեցող
մարկաների արտաբալանսային հաշվառումից, 1935 թ.
հունվարի 1-ից սկսած ժՏՀԿ վարչության թույլտ-
վությամբ, վերից մինչև վար, սահմանել ե յեռամայա-
կային հաշվետվություն հետևյալ յերկու ցուցանիշ-
ներով:

1000 8
37306 3976

1. Փայամարկաների: մնացորդները.
2. Վատնված փայամարկաների գումարը.

Առաջին ցուցանիշը (փայամարկաների մնացորդը)
տալիս ե մարկաների պաշարի մնացորդը: Այս ցուցա-
նիշը համեմատելով փայակուտակման պլանի հետ
(յեռամայա և տարեկան) տվյալ կողպերատրվում յե-
ղած մարկաների նորմալ պաշարի մասին ե պատկեր
տալիս:

Ցերկրորդ ցուցանիշը (վատնված փայամարկա-
ների գումարը) տալիս ե թվական տվյալներ մարկա-

Յերևան, Ահան-Քանաքեռի յուպարան

Գլավիտ N 147

Տիրաժ 600:

ների վատնումների ու հափշտակումների չափի մասին: Ի ուր կազմակերպությունները պարտավոր են ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ վերջ տալու փայամարկաների վատնումների կրկնվող փաստերին: Փայամարկաների վատնումների և հափշտակումների դեմ պայքարելու հիմնական պայման մենք համարում ենք փայամարկաների ընդունման, պահպանման, ծախսման և հաշվառման գործի կանոնավոր կազմակերպումը և վերահսկողությունը՝ հաշվի առնելով այն բոլոր մոմենտները, վորոնցից առաջ են գալիս վատնումներն ու յուրացումները:

Անհրաժեշտ է ուշի-ուշով ստուգել այն բոլոր աշխատակիցների վորակը, վորոնք կապ ունեն սպառկոպերացիայի մարկաների անտեսության հետ (հաշվապահներ, հաշվետարներ, կասսիրներ, փայասեղանի վարիչներ, դրամ հավաքողներ և այլն): Հիշյալ աշխատակիցներին աշխատանքի ընդունելիս պետք է նրանց խիստ ստուգման յենթարկել:

Այս հրահանգի կիրառումն ապահովելու համար պետք է մանրամասն մշակման յենթարկել այն համապատասխան աշխատողներին հետ:

Հայկոպի վարչություն՝ Ա. Տե՛ր Ա.Ռ.Քե՛կՅԱՆ
Հաշվառման սեկտոր՝ Գ. ՇԱ՛ՀՆԱԶԱՐՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՊՊԵՐԱՑԻԱՅԻ ՓԱՅԱՄԱՐԿԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԾԱԽՍՄԱՆ ՅԵՎ ՀՄՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. ԴՐԱՄ ՀԱՎԱՔՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԿԱՆԵՐ ՄՏԱՆԱԼՈՒ ՅԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՆՈՆԵՐԸ

1. Փայամուծումների գանձումը և փայատերերի գրքույկների վրա փայամարկաներ փակցնելը կատարում են բացառապես հարվածայինների, պրոֆմիտթյան անդամների, կոմյերիտականների, խանութի վարիչների ու գործակատարների այն ակտիվիստ դրամ հավաքողները, վորոնք ընտրվել են ձեռնարկությունների, հիմնարկների, կոլխոզների և այլն փայատերերի ժողովներում և առաջադրվել են կազմակերպությունների յիռանկյունիների կողմից:

2. Մարկաները տրվում են դրամ հավաքողներին առ հաշիվ 10 օրվա պաշարի սահմաններում (կամ մեկ ամսվա պլանի 1/3 մասի չափով): Մարկաներ բաց թողնելու օրդերները գրվում են յերկու օրինակից, վորոնցից մեկը դրամ հավաքողի ստորագրությամբ մնում է գանձապահի մոտ, իսկ մյուսը տրվում է դրամ հավաքողին:

3. Յուրաքանչյուր դրամ հավաքողի համար բացվում է անձնական հաշիվ, վորի մեջ նշանակվում է մարկաների յուրաքանչյուր հանձնումը, դրամների ամբողջ մուտքը և առհաշիվ մարկաների մնացույթը: Մարկաների անձնական հաշիվները ամեն մի գործարքից հետո պետք է աժուր վինի ըստ առհաշիվ անձերի:

Դրամ հավաքողի անձնական հաշվում նշանակվում է հիմնական տեղեկություններ նրա անձնագրից (պասպորտից) (Ք-ը, թվականը և տրման տեղը, ծնընդյան տեղը):

Անձնական հաշվում դրամ հավաքողը ստորագրում է այն մասին, վոր կարդացել է մարկաներն ստանալու և ծախսելու վերաբերյալ կանոնները և պարտավորվում է ճշտությամբ կատարել այդ կանոնները:

4. Դրամ հավաքողը կոոպերատիվից մարկաներն ստանալով դասավորում է նրանց առանձին թերթերով բաժանված թղթակալի մեջ և պահում է այն խնամքով: Մարկաների պահպանության համար լիովին պատասխանատու յե դրամ հավաքողը: Մարկաների փչացման և կորուստների մասին վորեվ հայտարարություն կոոպերատիվ վարչությունը չի ընդունում:

5. Դրամ հավաքողը փայտերերից դրամն ստանալով փայտերոջ անդամագրքույկի մեջ փակցնում է մարկաներ: Փայտիքոջ ձեռք մարկաներ տալը կտրակաճապես արգելվում է:

Դրքույկին փակցված բոլոր մարկաների վրա դրամ հավաքողը ստորագրում է թանաքով կամ քիմիական մատիտով և կամ հանգեցնում է հատուկ շտամպով: Դրամ հավաքողը մարկաները հանգեցնելով նշանակում է հանգեցման թվականը (ամսաթիվ, ամիս և տարի): Մարկաները հասարակ մտքիսով հանգեցնելը արգելվում է:

Դրամ հավաքողն ընդունած մուծումները գրանցում է հատուկ տեղեկագրի մեջ, վորտեղ ցույց է տրվում թե՛ մուծումն ումից է ստացվել, գրքույկի համարը և մուծումի գումարը: Մուծումը կատարելուց հետո փայտերն ամեն անգամ ստորագրում է այդ տեղեկագրում: Յերը տեղեկագրերը լցվում է (սակայն ամսվա ընթացքում յերկու անգամից վոչ պակաս, այն հանձնվում է կոոպերատիվի փայտեղանին կամ հաշվապահությանը):

6. Դրամ հավաքողը վաճառված մարկաների արժեքն, իրեն համար սահմանված ժամկետներին, մուծում է կոոպերատիվի դրամարկղը: Դրամ մուծողին տրվում է անդորրագրի:

Այն դեպքում, յերբ դրամ հավաքողը հավաքած դրամը մուծում է Պետրանկը խանութի վաճառքի գումարի հետ միասին, ուղեկցող փաստաթղթում առանձին տողով ցույց է տրվում փայտմուծումը:

Յուրաքանչյուր դրամ հավաքողի համար դրամը մուծելու ժամկետներ սահմանելը և դրա կատարմանը հետեվելը դրվում է փայտերի բաժնի վարիչի կամ գլխավոր հաշվապահի վրա: Վերջինը պարտավոր է ամիսը մեկ անգամից վոչ պակաս քննության անունը դրամ հավաքողի անձնական հաշիվը, իսկ յուրաքանչյուր յեռամսյակը մեկ անգամ ստուգման յենթարկել դրամ հավաքողին իր աշխատանքի տեղում:

7. Մարկաների հետ կատարված չարաշահումները հայտնաբերվելու դեպքում (դրամների պակասում, մարկաների վատնում և այլն), մեղավորներն անմիջա-

պես հանձնվում են քրեական պատասխանատվության և դատվում են 1932 թ. ոգոստոսի 7 Սոցիալիստական սեփականութեան պաշտպանութեան որոնքով: Կոոպ-կազմակերպութեան ղեկավարները վարչութեանը պետք է հետամուտ լինեն, վերականգնողական մարմինները մարկաների չարաշահման վերաբերյալ գործերը քննու-թյան առնեն արագացրած կարգով:

II. ՄԱՐԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՎԵՐՆԵՐ ՏԱԼԸ

8. Գյուղկոոպները, ՓԲԿ, քաղկոոպները, սովխոզ-բանկոոպները և մնացյալ սկզբնական սպառողական կոոպերատիվները փայտամարկաներն ստանում են Հայ-կոոպի միջոցով, իսկ շրջմիութեանները և քաղսպառ-միութեանները մարկաների համար Հայկոոպին հավաքական պատվերներ են տալիս իրենց ցանցի համար:

Հայկոոպն մարկաների պատվերներն ուղարկում է Յենտրոսայուզի Ֆին-պլան բաժնին:

9. Մարկաների պատվերները տրվում են յեռամ-սյակում մեկ անգամից վոչ հաճախ: Պատվերի մեջ պետք է ցույց տրվի. ա) Ինչպիսի մարկաներն են պա-հանջվում-1ու., 2ու., 3ու., 5ու., և 10ու. և ինչ քանակի:

բ) Ընդհանուր գումարն ըստ առանձին տեսակի մարկաների:

գ) Կազմակերպության (սիստեմի) մեջ յեղած մար-կաների մնացորդը պատվերը տալու ամսի 1-ին:

դ) Կազմակերպության փոստի լրիվ հասցեն (այն դեպքում, յեթե մարկաներն ուղարկվելու յեն փոստով):

III. ՄԱՐԿԱՆԵՐԻ ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

10. Յենտրոսայուզի Ֆին-պլան բաժնին Հանրա-պետական, Յերկրային, Մարդային Միութեաններեց ստանալով մարկաների պատվերները, Գոսզնակին տա-լիս և նարյադներ հիշյալ կազմակերպութեանների հասցեներով ուղարկելու պատվիրված տեսակի ու քա-նակի մարկաներ՝ նշանակելով վերադիր վճար մարկա-նների արտադրական արժեքի և փոխադրական ծախսե-րի գումարի չափով:

Գոսզնակն ուղարկելով (կամ բաց թողնելով) մար-կաները գրում է բեռնագիր յերկու որինակից, վորոն-ցից առաջինը պատվիրված նամակով ուղարկում է հա-մապատասխան կազմակերպությանը, իսկ յերկրորդը հանձնում է Յենտրոսայուզի Ֆին-պլան բաժնին:

11. Հայկոոպը մարկաներն ուղարկում է իր դրամ-արկղի անձնակազմի միջոցով, փոստային փաթեթով՝ վերադիր վճարով (արտադրական արժեքը, գումարած ծախսերը): Մարկաները մարդկանց ձեռքը հանձնելը թույլատրվում է միմիայն նույն քաղաքի կազմակեր-պութեաններին: Այլ քաղաքների միութեանների ներ-կայացուցիչների ձեռքը հանձնել մարկաները կարելի յե բացառիկ դեպքերում, այնել Հայկոոպի Ֆին-պլան ձաժնի ղեկավարի թույլտվութեամբ: Համենայն դեպս մարկաները մարդկանց ձեռքը հանձնելու համար պահանջվում է ներկայացնել փոխանորդագիր (տես ձևը 13 կետում): Մարկաների արժեքն (ծախսերի) այս դեպքում վճարվում է մարկաներ ստանալիս:

12. Շրջապատմիությունները, քաղսպառմիությունները և նրանց համապատասխան կազմակերպությունները մարկաներն սկզբնական կոոպերատիվների ներկայացուցիչներին տալիս են իրենց դրամարկղի անձնակազմի միջոցով և այնել պահանջելով փոխանորդները (տես ձեռք 13 կետում): Յուրաքանչյուր դեպքում մարկաները մարդու ձեռքը տալիս պահանջվում է վարչության անդամի գրավոր թույլտվությունն այն բաժնի, վորի վրա դրված է սիստեմայի մարկաների մատակարարումը:

Սկզբնական կոոպերատիվներին փոխթեթևորով մարկաներ ուղարկելը թույլատրվում է միմիայն այն դեպքում, յերբ տվյալ կոոպերատիվն իր միությունից հետո յե գտնվում: Այս դեպքում մարկաներն ուղարկվում է գնահատված (ապահովագրված) կապուցներով առանց վերադիր վճարի:

Սկզբնական կոոպերատիվները մարկաներն ստանում են իրենց շրջապատմիությունից առանց վճարի:

Մարկաների մատակարարման հետ կապված բոլոր ծախսերը վերաբերում են շրջապատմիության շրջանառության ծախսերին:

Սկզբնական այն կոոպերատիվները, վորոնք անմիջապես կապված են Հայկոպի հետ (քաղկոպները, ՓԲԿ և այլն), իրենց ստացած մարկաների համար վճարում են շրջապատմիություններին հավասար հիմունքներով և այդ ծախսերը ձևակերպում են շրջանառության ծախսերի հաշվին:

13. Կոոպերատիվ կազմակերպությունների ներ-

կայացուցիչների ձեռքը մարկաներ տալիս պետք է պահանջել համապատասխան ձեռքով ձեվակերպված փոխանորդները (անկյունային շտանպ, թվական, Ա, տեկստում-մարկաների քանակը և գումարը, փոխանորդի ազգանունն ու պաշտոնը և նրա ստորագրությունը): Փոխանորդներին հաստատվում է կազմակերպության յերկու պատասխանատու անձերի ստորագրություններով և կառուցուկի կողմից կնիքի դրոշմով:

Առանց այս կանոնների կիրառման փոխանորդները համարվում է անվավեր:

Մարկաներ մատակարարող բաժնի վարիչը փոխանորդագրի վրա մակագրում է «թույլատրվում է բաց թողնել մարկաներ»:

Մարկաները բաց թողնելուց հետո փոխանորդները մարկաներ ստացողի ստացականով կցվում է մարկաների ծախսման վերաբերյալ դրամարկղի հաշվետվությանը:

14. Մարկաները փոստով ուղարկվում է հետևյալ կերպով, մարկաների ամբողջ թերթիկներից կազմված փաթեթները փակցնում են թղթի խաչաձև շերտով, վորի վրա գրում են առանձին արժեքի մարկաների քանակը և նրանց վրա նշանակված արժեքի ընդհանուր գումարը: Այս տվյալներն իր ստորագրությամբ հաստատում է հաշվետարը (գանձապահը): Փաթեթը գնում են կտորի մեջ, կարում են շպաղաթով և կնքում կնքամոմի կնիքով այնպես, վորպես փաթեթի միջից հնարավոր չլինի մարկաների թերթերը դուրս քաշել:

15. Ուղարկվող (կամ բացթողնվող) մարկաները համար գրվում են յերկու որինակից բեռնագրեր, վորոնցից մեկը պատվիրված նամակով ուղարկվում է պատվեր տվողին, իսկ մյուսը փոստի անդորրագրեր կամ ստացողի ստացականով վավերացված փոխանորդագրեր հետ միասին կցվում է մարկաների ծախսմանը վերաբերվող դրամարկղի հաշվետվությանը: Բեռնագրի տակ ստորագրում են մարկաների ստացողը և մարկաներն ուղարկող կամ բաց թողնող անձը: Բեռնագրի բովանդակությունն անց է կացվում պահեստի դրամարկղի յեւք ու մուտքի գրքի մեջ:

16. Բաց թողնվելիք մարկաների ընդհանուր քանակը և նրանց մնացորդների գումարը միջոցների մորելիզացիայի պլանի 150 տոկոսից չպետք է գերազանցի: Այն դեպքում, յերբ պլան սահմանված չէ, վերցվում է նախորդ յեռամսյակի փաստացի կատարողականը:

17. Առանձին կազմակերպություններին բացթողնվելիք մարկաների չափը կարելի յէ ավելացնել, բայց յերկու անգամից վոչ ավելի, քան ցույց է տրված վերը:

Այլ սխտեմին (որինակ ՈՐՄ-րին) մարկաներ բաց թողնելը կարելի յէ կատարել Յեստորոսայուզի կամ չայկոոպի հատուկ թույլտվությամբ:

IV ՄԱՐԿԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

18. Փոստից կամ փոխանորդ անձերից մարկաների ընդունումը կատարվում է հանձնաժողովի կողմից, վորի կազմի մեջ մտնում են Ֆին բաժնի, Վերահսկիչ-

վերստուգիչ հանձնաժողովի ներկայացուցիչները և մարկաները պահող գանձապահը (կամ այլ անձը):

Հանձնաժողովի անհատական կազմը սահմանվում է Ֆինանսական բաժնի ղեկավարի կամ վարչության (Շրջմիության, Քաղապառնության, ՓԻԿ-ի, Գյուղկոոպի և այլն) նախագահի կարգադրությունով:

19. Փոստի բաժամունքից մարկաների փաթեթն ընդունելիս, ընդունման տեղում փաթեթը ուշադրությամբ պետք է նայվի, փաթեթը փնասված լինելու դեպքում, այդ մասին պետք է կազմվի արձանագրություն: Փաթեթը բացում են փոստի բաժամունքի ներկայացուցիչ ներկայությամբ և հայտնաբերում են պատարկ մարկաների անվանական արժեքների գումարը: Արձանագրության տակ ստորագրում են կոոպերատիվ կազմակերպության մարկաներ ընդունող աշխատակիցը և փոստի բաժամունքի ներկայացուցիչը: Յեթե արձանագրություն չի կազմվել, ապա պակասած մարկաների պատասխանատվությունն ընկնում է փնասված փաթեթն ընդունողի վրա:

20. Մարկաներ ընդունող հանձնաժողովը կատարում է ստացված մարկաների քանակային և գումարային ստուգում, վորի հետեւանքը համեմատում է բեռնագրի հետ և կազմում է ընդունման արձանագրություն: Արձանագրությունը կազմվում է յերկու որինակից, վորոնցից մեկը մուտքի փաստաթուղթ է, և բեռնագրի հետ միասին կցվում է դրամարկղի հաշվետվությանը, իսկ մյուսն ուղարկվում է մարկաները մատակարարող միությանը, վորպես մարկաների ստացումը հաստատող փաստաթուղթ:

21. Այն դեպքում, յեթե ֆնասովածք չունեցող փաթեթում հայտնաբերվում է մարկաների պակասորդ, հանձնաժողովն արձանագրութեան մեջ կատարում է համապատասխան ցուցում և մարկաներ մատակարարողին ուղարկվելիք որինակի հետ ներկայացվում է փաթեթը պատրաստող գանձապահ—փաթեթողի ստացականը (14 կետ):

22. Հանձնաժողովի արձանագրութեան ներով ընդունված մարկաները գանձապահը գրանցում է դրամարկղի յեւք ու մուտքի գրքի մեջ:

Յեթե միութեան դրամարկղային և հաշվարկային սպասարկումը հանձնված է Պետքանկին (հաշվարկային դրամարկղ, փակ տիպի գործակալութիւն, Պետքանկի բաժանմունք), ապա Պետքանկի հետ կնքած պայմանագրում պետք է նշվի, Վոր վերջինը վերցնում է իր վրա մարկային տնտեսութեան գործարքների տանելը ներկա հրահանգի ցուցումների համաձայն:

V. ՄԱՐԿԱՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

23. Մարկաների ընդունման, պահպանման և առաքման հետ կապված բոլոր աշխատանքը դրվում է կազմակերպութեան գանձապահի վրա: Այն դեպքում, յեթե ավյալ կազմակերպութեան մեջ գանձապահի պաշտոն սահմանված չէ, ապա նրա պարտականութիւնները մարկաների նկատմամբ, համաձայն կազմակերպութեան վարչութեան վորոշման, դրվում է վարչութեան քարտուղարի, հաշվապահի կամ վերջինիս փոխարինող հաշվետարի վրա:

24. Մարկաները պետք է պահվեն հրգեհից պաշտպանված պահարանում (կամ յերկաթե արկղում, անդուկում և այլն):

Վորպեսզի մարկաները միմիայն չկաշեն, մարկաների փաթեթները պետք է դնել կողքի վրա, իսկ առանձին թերթերի արանքում, մեջ ընդ մեջ, պետք է դնել մաքուր թուղթ:

VI. ՄԱՐԿԱՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

25. Ինչպես կողպերատիվ կազմակերպութեան ների դրամարկղներում պահվող, այնպես էլ ցանցին ուղարկված և դրամ հավաքողներին առ հաշիվ տրված մարկաների համար, ըստ նրանց քանակի և անվանական գումարի, տարվում է արտաբալանսային հաշվառում:

26. Մարկաների հաշվառումն ըստ նշանակված արժեքների տանելու համար բացվում են հետեւյալ արտաբալանսային հաշիվները:

	Հայկոսպ	Գյուլկոսպ
Խիստ հաշվետվութեան բլանկներ տրված (ակտիվային) . . .	Ա 1	18
Առհաշիվ անձիք ըստ խիստ հաշվետվութեան բլանկների (ակտիվային)	Ա 2	19
Խիստ հաշվետվութեան բլանկների բացթողումը (պասսիվային) . . .	Ա 4	17
Խիստ հաշվետվութեան բլանկների առաքումը (ակտիվային)	Ա 7	—
Չանագան անձիք և հիմնարկներ ըստ խիստ հաշվետվութեան բլանկների պակասումների և վատնումների (ակտիվային)	Ա 6	20

27. Այս հաշիվներով գրանցումներ կատարելու կարգը և հիմքը հետեւյալն է. մարկաների ամեն տեսակի ստացումը գրանցվում է Ա.¹ (18) հաշվի դեբետին և Ա.⁴ (17) հաշվի կրեդիտին: Գրանցմանը, վորպես հիմք ծառայում է առաքողի բեռնագիրը և մարկաներն ընդունողի ակտը: Յեթե մարկաները բեռնագրի քանակից պակաս են դուրս գալիս, ապա պակասորդի գումարը մինչեւ պարզաբանումը գրանցվում է Ա. 6 (20) հաշվի դեբետին:

Ա. 4 (17) հաշվի կրեդիտին միշտ գրանցվում է բեռնագրում նշանակված լրիվ գումարը:

Կազմակերպություններին բաց թողած մարկաները գրանցվում են Ա.⁷ հաշվի դեբետին: Դրամ հավաքողներին բաց թողած մարկաները գրանցվում են Ա.² (19) հաշվի դեբետին, իսկ յերկու դեպքում ել գրանցվում են Ա.¹ (18) հաշվի կրեդիտին:

Գրանցման համար վորպես հիմք ծառայում է մարկաներն ուղարկելու բեռնագիրը կամ դրամ հավաքողին մարկաներ բաց թողնելու որդերները:

Վերադարձված մարկաների համար կազմվում է «Ստորնո» հոդված (կարմիր թանաքով): Յերբառաքողն ստանում է մարկաներն ստանալու մասին պատվեր տվողի կողմից հաստատում, ապա գրանցվում է Ա.⁴ հաշվի դեբետին և Ա.⁷ հաշվի կրեդիտին:

Ա.⁴ (17) հաշվի դեբետին և Ա.² (19) հաշվի կրեդիտին վերաբերող գրանցումները կոպերատիվներում կատարվում են դրամարկղային այն հաշվետվությունների հիման վրա, վորոնցում ցույց են տրվում դրամ

հավաքողների կողմից մուծված մարկաների դումարները:

Ա.⁶ (20) հաշվի դեբետին գրանցվում են մարկաների բոլոր պակասորդներն, այն է և առաքողներից պակաս ստացվածները և դրամ հավաքողների վատգումները: Վերջին դեպքում Ա.⁶ (20) հաշվը պարտաւերելիս Ա.² (19) հաշվը պահանջագրվում է:

Ա.⁶ (20) հաշվի կրեդիտին գրանցումները կատարվում են հետեւյալ դեպքերում. մարկաները պակաս ուղարկելու մասին առաքողի վավերացումն ստանալիս Ա.⁴ (17) հաշվը պարտագրվում է, լրացուցիչ մարկաներն ստանալիս պարտագրվում է Ա.¹ (18) հաշվը, իսկ վատնողներից դրամ ստանալիս պարտագրվում է Ա.⁴ (17) հաշվը:

28. Վերը ցույց տված յուրաքանչյուր հաշվի նկատմամբ տարվում է քանակային և գումարային անալիտիկ հաշվառում:

Ա.¹ (18) հաշվով տարվում է մարկաների յուրաքանչյուր արժեքի և յուրաքանչյուր տեսակի քանակային հաշվառում:

Ա.⁷ հաշվով տարվում է գումարային հաշվառում ըստ յուրաքանչյուր կոպերատիվ կազմակերպության առանձին:

Սկզբնական կոպերատիվներում Ա.² (19) հաշվի անալիտիկ հաշվառմանը փոխարինում է դրամ հավաքողի անձնական հաշվը:

Ա.⁶ (20) հաշվով տարվում է գումարային հաշվառում ըստ յուրաքանչյուր վատնողի առանձին:

Ա.⁴ (17) հաշվով անալիտիկ հաշվառում չի տարվում:

1008
3946
37306



29. Մարկաների հաշվառումը, համաձայն այս հրահանգի, գործադրվում է այն մոմենտից, յերբ տեղում կ' ստացավի այս հրահանգը: Հաշվառումն սկսվում է մարկաների այն ինվենտարիզացիայի տվյալների հիման վրա, վորը կատարվելու յե այս հրահանգն ստանալու հաջորդ ամսվա մեկից: Հետագայում լրիվ ինվենտարիզացիա կատարվելու յե տարին չորս անգամից վոչ պակաս, ըստ յեռամսյակի վերջին որերի:

Մարկաների ինվենտարիզացիան կատարող հանձնաժողովի կազմը նույնն է, ինչ վոր մարկաներն ընդունելիս (տես 13 կետը): Մարկաների ինվենտարիզացիայի արձանագրության մի որինակը պետք է ուղարկել այն վերադաս կոոպերատիվ կազմակերպությանը, վորից ստացվում են մարկաները:

30. Ինչպես մարկաների հավաք, այնպես էլ անալիտիկ հաշվառումը տանում է կազմակերպության հաշվապահությունը: Հաշվառման ճիշտ դրվածքի համար պատասխանատու յե ամեն մի կազմակերպության գլխավոր հաշվապահը:

Հաշվառման պատասխանատվությունը չի կարող դրվել այն անձի վրա, վորը մարկաները պահում է ու բաց թողոնում (գանձապահ): Վերջինի մոտ պետք է տարվի յելք ու մուտքի գերք (որագիր):

31. Մարկաների արժեքի բալանսային հաշվառումը, սկզբնական այն կոոպերատիվներում, վորոնք մարկաներն ստանում են ձրի, չի տարվում:

Մնացյալ կոոպերատիվներում մարկաների բալան

սային հաշվառումը տարվում է հետեւյալ կերպով:

Մարկաների լրիվ ինքնարժեքը գրանցվում է «նյութի տնտեսական կարիքների համար» հաշվի դեբետին (ըստ այն աշխատակցի անձնական հաշվի, վորի պահպանության տակ նրանք գտնվում են):

Շրջապատմություններին և ուրիշներին ուղարկված (կամ բացթողնված) մարկաների ինքնարժեքը գրանցվում է նյութերի և տարայի իրացում հաշվի կրեդիտին:

Բացի առաքման ուղղակի ծախսերից մարկաների ինքնարժեքին վորիվ է հավելում անել չի թույլատրվում:

VII. ՄԱՐԿԱՆԵՐԻ ՀԱՇՎԵՑՎՈՒԹՅՈՒՆԸ

32. 1935թ. հունվարի մեկից սկսած բոլոր կոոպերատիվ կազմակերպությունները, սկսած սկզբնական կոոպերատիվից, իրենց յեռամսակային հաշիտվություններում ցույց են տալիս հետեւյալ տեղեկությունները:

1) Մարկաների ֆնացորդը սիստեմայում (Ա¹, Ա² և Ա⁷ հաշիվների սալոն):

2) Վատնված մարկաների գումարը (Ա⁶ հաշիվների սալոն):

VIII. ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿԻՉ-ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՇՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՅԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԿԱ ՀՐԱՀԱՆԳԻ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Ներկա հրահանգի կատարմանը սպառողական կոոպերատիվների ու Հայկոոպի կողմից տարվելիք վերա-

հսկողութեան պարտականութիւնը դրվում է այն կազմակերպութիւնների վերահսկիչ—վերստուգիչ հանձնաժողովների վրա և միութիւնների այն վերստուգիչ տեսուչների վրա, վորոնք հետազոտում են կազմակերպութեան ֆինանսական աշխատանքը:

Մարկանների ճիշտ պահպանման, ծախսման և հաշվառման ստուգումը վերահսկիչ—վերստուգիչ հանձնաժողովների կողմից պետք է կատարվի հանրապետական միութիւններում մեկ անգամից վոչ պակաս յեռամսյակում, իսկ շրջսպառմիութիւններում և սկզբնական կոոպերատիւներում յերկու անգամից վոչ պակաս յեռամսյակում:

Նման ստուգում միութեան ներկայացուցչի կողմից պետք է կատարվի ամեն անգամ, յերբ կ'հետազոտվի կազմակերպութեան ֆինանսական աշխատանքը: Վերահսկիչ—վերստուգիչ հանձնաժողովի կամ միութեան աշխատակցի կատարած ստուգման հետեւման քննիչները պարտադիր կերպով ուղարկվում են Հայկոպին:

Իսկ Հայկոպում մարկանների ստուգման հետեւանքներն ուղարկվում են Յենտրոսայուզի ֆինպլան բաժնին:

